Քաղաքացիական գործ թիվ **ԵԴ/4848/02/23**

ՀՀ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄ

ԳՈՐԾԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԱՎՈՐ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

10.06.2024թ. ք.Երևան

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Թ. Ղուկասյանս (այսուհետ՝ Դատարան), քննության առնելով թիվ ԵԴ/4848/02/23 քաղաքացիական գործը վարույթ ընդունելու հարցը,

ՊԱՐԶԵՑԻ

«ՄՈՍԷՍՔՈ» ՍՊ ընկերությունը հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան /դատավոր՝ Ռ. Ներսիսյան/ ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության՝ ՀՀ պաշտպանության նախարարության և «ՄՈՍԷՍՔՈ» ՍՊ ընկերության միջև 29.06.2022 թվականին կնքված «ՀՄԱԱՊՁԲ-22-7/1-1» ծածկագրով գնման պայմանագիրը ՀՀ պաշտպանության նախարարության կողմից միակողմանի լուծելու մասին 27.01.2023 թվականի որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի /դատավոր՝ Ռ. Ներսիսյան/ 13.02.2023 թվականի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ և նշանակվել է նախնական դատական նիստ:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը /դատավոր՝ Ռ. Ներսիսյան/ որոշում է կայացրել ապացույց պահանջելու մասին:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի /դատավոր՝ Ռ. Ներսիսյան/ 13.02.2023 թվականի որոշմամբ հայցվորի կողմից ներկայացված հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդությունը բավարարվել է:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի /դատավոր՝ Ռ. Ներսիսյան/ 10.03.2023 թվականի որոշմամբ հայցի առարկան և հիմքը փոփոխելու վերաբերյալ միջնորդությունը բավարարվել է:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի /դատավոր՝ Ռ. Ներսիսյան/ 13.03.2023 թվականի արձանագրային որոշմամբ կողմերի միջև բաշխվել է ապացուցման պարտականությունը:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի /դատավոր՝ Ռ. Ներսիսյան/ 13.03.2023 թվականի որոշմամբ քաղաքացիական գործը քննելու և վերջնական դատական ակտի կայացման ժամկետը երկարաձգվել է:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի /դատավոր՝ Ռ. Ներսիսյան/ 27.04.2023 թվականի որոշմամբ նշանակվել է փորձաքննություն և գործի վարույթը կասեցվել է:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ռ. Ներսիսյանի ամենամյա հերթական արձակուրդում գտնվելու հանգամանքով պայմանավորված 10.08.2023 թվականին սույն քաղաքացիական գործը մակագրվել է նույն դատարանի դատավոր Ա. Բադիրյանին:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի /դատավոր՝ Ա. Բադիրյան/ 22.08.2023 թվականի որոշմամբ քաղաքացիական գործն ընդունվել է վարույթ:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը /դատավոր՝ Ա. Բադիրյան/ 03.01.2024 թվականին որոշում է կայացրել քաղաքացիական գործի վարույթը վերսկսելու և գործը քննության նշանակելու վերաբերյալ:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ա. Բադիրյանի նպատակային արձակուրդում գտնվելու հիմքով թիվ ԵԴ/4848/02/23 քաղաքացիական գործը 31.05.2024 թվականին մակագրվել է դատավոր Թ. Ղուկասյանիս և 05.06.2024 թվականին հանձնվել է Դատարանի կազմին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ հոդվածի համաձայն՝ «1. Դատարանը սույն գլխով սահմանված կարգով քննում և լուծում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ *պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկման հետ կապված վեճերը:*

2. Գնումների հետ կապված վեճերը քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում: Դատարանի պատճառաբանված որոշմամբ սույն մասով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև տասն օրացուցային օրով»:

Տվյալ դեպքում ներկայացված հայցապահանջով հայցվորը վիճարկում է պատվիրատու պատասխանողի գործողությունները՝ ուղղված թիվ «ՀՄԱԱՊՁԲ-22-7/1-1» ծածկագրով գնման ընթացակարգով ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Կ. Բրուտյանի կողմից 29.06.2022 թվականին կնքված պայմանագիրը միակողմանի լուծելու մասին 27.01.2023թ. որոշումը և ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Կ. Բրուտյանի 09.02.2023 թվականի՝ «ՄՈՍԷՍՔՈ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին որոշումն անվավեր ճանաչելուն, ուստիև հայցը ենթակա է քննության ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.2-րդ գլխի կանոններով:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 125-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, 199-րդ, 200-րդ հոդվածներով, ինչպես նաև 27.2-րդ գլխի կանոններով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Քաղաքացիական գործն՝ ըստ հայցի՝ «ՄՈՍԷՍՔՈ» ՍՊ ընկերության ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության՝ ՀՀ պաշտպանության նախարարության և «ՄՈՍԷՍՔՈ» ՍՊԸ-ի միջև 29.06.2022թ. կնքված «ՀՄԱԱՊՁԲ-22-7/1-1» ծածկագրով գնման պայմանագիրը ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Կ. Բրուտյանի կողմից միակողմանի լուծելու մասին 27.01.2023թ. որոշումն անվավեր ճանաչելու մասին և ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Կ. Բրուտյանի 09.02.2023 թվականի՝ «ՄՈՍԷՍՔՈ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին, ընդունել վարույթ:

2. Գործի քննությունն իրականացնել գրավոր ընթացակարգով՝ դատական ակտի հրապարակման օր սահմանելով 12.07.2024 թվականին՝ դատական իշխանության պաշտոնական էլեկտրոնային կայքի (datalex.am) միջոցով:

Որոշումը եռօրյա ժամկետում ուղարկել գործին մասնակցող անձանց:

Որոշումն անհապաղ ուղարկել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին՝ secretariat@minfin.am:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Թ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**